# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ամուրա ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | Մարմնամարզական պատ – Հենարանային կանգնակները պետք է պատրաստված լինեն պինդ սոճուց, աստիճանաձողերը՝ պինդ հաճարենուց, թխկիից կամ պինդ կեչիից: Մարմնամարական պատի բարձրությունը պետք է լինի 2000մմ, լայնությունը՝ 850մմ, վերին հատվածի խորությունը՝ 240մմ, և, 110մմ՝ մնացած բարձրության երկայնքով: Ուղղահայաց կանգնակների հատվածքի չափերն են՝ 110x35մմ: Աստիճանաձողերը պետք է լինեն օվալաձև Φ30x40(h)մմ չափերի: Աստիճանաձողերի միջև առանցքային հեռավորությունը պետք է լինի 170մմ: Աստիճանաձողերի առավելագույն ծանրաբեռնվածությունը պետք է լինի 80կգ: Ստորին ձողը պետք է տեղակայված լինի հատակից 150մմ բարձրության, իսկ վերին ձողը պետք է լինի 70մմ առաջ մյուս աստիճանաձողերի համեմատ: Վերին ձողը պետք է ունենա կլոր հատվածք՝ Φ30մմ տրամագծով: Այն նախատեսված է ձողան օգտագործելու համար: Վերին ձողանի հեռավորությունը ներքևի աստիճանաձողից պետք է լինի 250մմ: Վերին ձողանը պետք է լաքապատված լինի բարձրորակ խոնավակայուն և չսահող լաքով: Աստիճանաձողերի ամրացումը չպետք է լինի մեխով կամ հեղյուսով: Մարմնամարզական պատի բոլոր ամրացումները պետք է իրականացվեն բարձորակ և ամուր դետալներով՝ հաշվի առնելով մարզադահլիճի առանձնահատկությունները, հատակին հպվող մասի տակ լինեն ռետինե դետալներ և դիմակայեն առավելագույն ծանրաբեռնվածության հանրագումարին: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Չափաբաժինների համար երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների |

| | |
|---|---|
| | փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափաբաժնում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և հավաքումը՝ ըստ հասցեների իրականացվում է Վաճառողի կողմից: Մինչև մատակարարումը չափաբաժնում ներկայացված ապրանքների նմուշները համաձայնեցնել Գնորդի հետ, հեռ. 010-599-699(564): Մատակարարման օրը համաձայնեցնել Գնորդի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Амура ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊԶԲ-26/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | |